

ԳԼՈՒԽ 14



ԾԱՐԱԳՈՐԾՈՒՄ, ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆԱՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր կին կարող է շահագործման ենթարկվել: Ողջ աշխարհում շատ կանանց վատ են վերաբերվում ինչպես անձանութերը, այնպես էլ նրանց լավ ճանաչող մարդիկ: Կարող են ծեծել, բռնաբարել, փարկարելի, սեռական շահագործման ենթարկել, վճասել կամ նույնիսկ՝ ապանել: Հաճախ ոչ ոք չի իմանում շահագործման մասին, քանի որ նրանք ամաչում կամ վախենում են խոսել այդ թեմայով: Կարծում են, որ ոչ ոք չի տանի իրենց մասին, կամ կմեղադրեն՝ ենթարկվելու համար: Շատերին վատ են վերաբերվում, քանի որ թույլ են, ոչ կարևոր, և շահագործողներն ավելի իշխանություն ունեն, քան իրենք: Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները հաճախ են ենթարկվում շահագործման և սեռական բռնության, քան այն կանայք, ովքեր հաշմանդամություն չունեն: Մարդիկ կարծում են, որ նրանք ավելի թույլ են, քայլ կնոջ հաշմանդամությունը բռնության, շահագործման կամ արհանդարի առիթ չի ստեղծում: Նրանք արժանի են՝ ապրելու ապահով կյանքով այն մարդկանց հետ, ովքեր կիոքան իրենց մասին և լավ կվերաբերվեն:

Հաշմանդամություն ունեցող կինը կամ աղջիկը կարող են շահագործվել տղամարդու, կնոջ, իրենց ընտանիքի անդամների, ամուսնու, գործընկերոց կամ խնամակալի կողմից, ինչպես նաև՝ հարևանի, ընտանիքի բարեկամի, գործատուի կամ անձանթի: Հատկապես, եթե շահագործողն այն մարդն է, ում կինը դիմում է՝ իր առօրյա խնդիրներում աջակցություն ստանալու համար: Նրան կարող է թվայլ, քեզ նման պարագայում չի կարող դիմել որևէ մեկին: Բայց եթե լրում է բռնության մասին, դառնում է ավելի խոցելի և մեկուսացված: Դիմելով վստահելի մեկին՝ կարող է դիմակայել բռնությանն ու աջակցություն ստանալ:

Ցանկացած կնոջ հանդեպ բռնությունն ու շահագործումը սխալ է: Քանի որ հաշմանդամություն ունեցող կանանց հաճախ ավելի քիչ են հարգում, ուստի նրանք չեն արժանանում ուշադրության և պաշտպանության: Այս երևոյթը մարդկանց սովորեցնում է, որ վերջիններիս հանդեպ շահագործումը խնդիր չէ, և չկա նրանց իրավունքները հարգելու անհրաժեշտություն:

ԴԱՅԱՀԱՆՈՒՍՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՅԱՀԱՆՈՒՍՅՈՒՆ

14

**Մխաղ կարծիք.**

հաշմանդամություն ունեցող աղջկաները երջանիկ պիտի լինեն, որ խնամակալ ունեն, նույնիսկ, եթե ենթարկվում են շահագործման:

Ծշմարտություն. Աս այնքամ խնամքի իրավունք ունի, որքան՝ մյուսները:

**Մխաղ կարծիք.**

հաշմանդամություն ունեցող կանանց շահագործումը բնական է: Նրանք հիմար են, կարիք չկա, որ նրանց լսեն:

Ծշմարտություն. Արանց շահագործումը բնական երևոյթ չէ: Ոչ ոք չպետք է շահագործման ենթարկվի, հատկապես՝ մտավոր խնդիրներով կանայք: Պետք է վերջ տալ շահագործման ցանկացած դրսուրման՝ արհանարիանը, հոգեկան ճնշում, դպրոց հաճախելու արգելք, առանց կնոջ հետ խորհրդակցելու՝ որոշումների կայացում, ֆիզիկական շահագործում կամ սեռական բռնություն:

Բռնության տարբեր դրսերումներ

Բռնության տարբեր դրսերումներ

Երբ մարդիկ մտածում են դրա մասին, պատկերացնում են մեկին՝ լրջորեն վնասված, ծեծված, բռնաբարության և սեռական շահագործման ենթարկված, նոյնիսկ՝ սպանված: Հաշմանդամություն ունեցող կանայք խոցելի են ոչ միայն ֆիզիկապես, այլև բռնության մյուս դրսերումների հանդեպ:

Օրինակ՝ երբ կինը կախվածության մեջ է առօրյա գործերում իրեն օգնողից, նրան կարող են ամորանք տալ, գրկել դեղորայքից, սննդից, ջրից, թրջված կամ կեղտոտ բողնել, անհրաժեշտ խնամք չցուցաբերել: Որոշ մարդիկ կարող են ստիպել, որ կանայք իրենց մարմնով հատուցեն խնամքի դիմաց: Նրանցից ոմանց հազվադեպ են թույլ տալիս շփվել այլ մարդկանց հետ կամ տնից դուրս գալ: Մյուսներին կարող են մենակ բողնել, լրել կամ ենթարկել այլ բռնությունների:

Ֆիզիկական, ինչպես նաև բռնության և շահագործման մյուս դրսերումները կարող են հոգեկան լուրջ խնդիրներ առաջացնել: Բռնության ենթարկված կանայք վախեցած և տիսուր են լինում, հաճախ նաև ընկնում են ընկճախտի մեջ: Նրանց և՛ մարմինը, և՛ գիտակցությունն ու հոգին բուժման կարիք ունեն:

Կինը կարող է բռնության ենթարկվել հաշմանդամություն ունեցող այլ անձի կողմից: Եթե տղամարդն անկարողություն և զայրույթ է զգում իր հաշմանդամության պատճռով, կարող է ծեծել զուգընկերություն, որպեսզի հաստատի իր իշխանությունը նրան նկատմամբ:



Կարծում եմ՝ Կենզր վաս է վերաբերվում
Էնիին:

Բայց նա հաշմանդամություն
ունի և չի կարող վնասել որևէ
մեկին:

Հոգեկան բռնություն

Սա այն է, եթե որևէ մեկը վիրավորում, վախեցնում, լրում կամ մեկուսացնում է կնոջը և անարժան համարում նրան: Որոշ մարդիկ բռնության են ենթարկում հաշմանդամություն ունեցող կանանց, ասելով, որ նրանք բեռ են և արժանի չեն ապրելու: Հոգեկան շահագործումն այն է, եթե

- Վաս են արտահայտվում խոլ անձնավորության մասին այն մարդկանց մոտ, ովքեր լսում են:
- Կնոջը մականունվ են դիմում և գոռում նրա վրա, որ ինչ-որ բան այլ կերպ անի:




Հոգեկան բռնուրյունը ճիշտ է կնոջը

Այն չի թողնում, որ հաշմանդամություն ունեցող կինը ձեռք քերի ինքնավստահություն: Լրված կնոջը թվում է, թե կորցրել է իր տեղն ու դերը հասարակության մեջ, և իրեն ավելի քոյլ ու տխոր է զգում:



Հրվածություն

Հաճախ մարդիկ լրում կամ իրաժարվում են խնամել հաշմանդամություն ունեցող անձանց: Երեխան կարող է լրվել իր ընտանիքի կողմից, եթե ամոքանը են տալիս նրա հաշմանդամության պատճառով, կամ եթե ծնողները կարծում են, որ չեն կարողանա լիարժեք խնամել երեխային: Հաշմանդամություն ունեցող կնոջը կարող են լրել, եթե ամուսինը կամ ընտանիքը չեն համակերպվում նրա մարմնում կատարված փոփոխություններին:



Մեկուսացում

Կնոջը սենյակում մենակ քողնելը բռնության ամենակոպիտ դրսևորումներից մեկն է:

Եթի համայնքը չի հարգում կամ չի ընդունում նրանց, որոշ մարդիկ ամաչում են հաշմանդամություն ունեցող կին կամ աղջիկ ունենալ իրենց ընտանիքում: Նրանք կարող են մարդկացից քարցնել վերջինիս կամ ձևացնել, որ նա գոյություն չունի: Հաճախ կանանց քույլ չեն տալիս ստանալ կրթություն, մասնակցել համայնքային իրադարձություններին կամ կրոնական ծեսերին:

Որոշ համայնքներում նրանց մեկուսացնում են, քանի որ մարդիկ մտածում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց շրջապատում լինելու դեպքում իրենք էլ հաշմանդամ կդառնան: Որոշ մարդկանց կարծիքով, եթե հոդի կինը դիպչի հաշմանդամություն ունեցող անձի, ապա նրա երեխան էլ ծնվելիս հաշմանդամություն կունենա: Սա ճիշտ չէ: Հաշմանդամությունը հնարավոր չէ ձեռք բերել այլ անձից:

Որիամարիանք


Սա այն է, եթի հաշմանդամություն ունեցող անձի խնամակալն անտեսում է կամ չի օգնում նրան: Օրինակ՝ եթի մեկը:

- Սնունդ չի տալիս կամ կոպատրեն է կերակրում:

- Չի օգնում նրան վերցնել անիրաժեշտ դեղորայքը:



Ժամանակն է, որ ես ընդունեմ իմ դեղորայքը, խնդրում եմ, օգնիր ինձ:



Ես այն կտամ, եթի ինձ հարմար լինի:

- Չի օգնում զուգարանի հետ կապված խնդիրների ժամանակ:



Ես զբաղված եմ, պիտի սպասես:

Խնդրում եմ, տվեք իս հենակները:



Կուգենայի տնից դուրս գալ: Ես ինձ այնքան միայնակ եմ օգում ողջ օրը տանը պառկած:

Արհամարհանքի մյուս դրսևորումներն են՝

- հաշմանդամություն ունեցող կնոջը երկար ժամանակ անկողնում պառկած թողնելը,
- հազմվելիս և լվացվելիս նրան չօգնելը,
- շարժվելու կամ մարմնի դիրքը փոխելու ժամանակ մենակ թողնելը,
- կեղտու կամ թաց հազուսար չփոխելը:

Մարդիկ նաև արհամարհում են կնոջը՝ տանը մենակ թողնելով, գրկելով լավ կրթության ստանալու հնարավորությունից, սննդից կամ հազուստից:

Արհամարհանքը կարող է վնասել, միայնակ և վախեցած դարձնել կնոջը: Կարող են առաջանալ պառկելախոցեր, եթե նա երկար ժամանակ մնում է անկողնում՝ նույն դիրքով պառկած:

Ֆիզիկական բռնություն

Սա իր մեջ ներառում է ծեծը, ներքնացելը, կճմտելը, ապտակելը և հարվածելը: Հաճախ մարդիկ վախեցնում են հաշմանդամություն ունեցող կնոջ երեխաներին: Դա ավելի է ճնշում նրան, քանի որ զգում է, որ չի կարող պաշտպանել իր երեխաներին:



Կանանց կարող են բռնության ենքարկել, նրանց հետ վաստված կիվանդանոցներում, դպրոցներում, խնամքի տներում, աշխատանքի վայրում, հասարակական տրանսպորտում կամ նոյնիսկ՝ իրենց տանը:

Վիրավորանքից և ծեծի ենթարկվելուց բացի՝ հաշմանդամություն ունեցող կանայք բռնության են ենթարկվում երբ:

- Մեկը դիտմամբ կոտրում է նրանց սարքավորումները՝ լսողական սարքը կամ հենակ-ները:



- Միտումնավոր կերպով տեղաշարժում է կույր կնոջ կահույքը, որպեսզի դժվարություններ առաջանանան տեղաշարժվելիս:



- Կնոջը ստիպում են մերկանալ անձանոքների առջև՝ հիվանդանոցում զննման ժամանակ:




Բուժաշխատողները կարող են կանչել այս երևույթը՝ ծածկելով նրա մարմինը շղթերով կամ սավանով:

Կանխենք շահագործումը

Հաշմանդամություն ունեցող կանանց ապահովության եղանակներից մեկը համայնքային կյանքում ներգրավված լինելն է: Մարդկանց հետ շփվելը կօգնի նրանց աջակցություն ստանալ:

- Շփվեք շատ մարդկանց հետ: Եթե սկզբում դժվարությամբ են ընկալում ձեր խոսքը, ապա ընթացքում ավելի հեշտությամբ կհասկանան: Պարզ նկարներ պատկերելը նոյնականացնելու համար է օգնել:
- Բոնության մասին գրուցեք ձեզ վստահելի մարդկանց հետ: Դժվար կլինի պատմել պատահածի մասին, եթե ամաչում եք կամ վախենում, որ ձեր հանդեպ բռնություն կատարած անձի ինքնությունը կրացահայտվի: Կարող է թվական թե ձեզ չեն հավատաքանի մասին գաղափար ունենալ, որ ավելի վատ զգաք՝ դրա մասին խոսելիս, հատկապես, եթե ձեզ չեն լսում: Բայց ամեն դեպքում որևէ մեկի հետ խոսելն օգնություն ստանալու ամենալավ եղանակն է:



Ես մենակ էի, շփվում էի միայն իմ ամուսնու հետ, ով գիտեր ժեստերի լեզուն: Երբ համայնքի որոշ կանանց սովորեցրի հաղորդակցվել այդ լեզվով, նոր ընկերներ ձեռք բերեցի, և ինձ համար հեշտացավ շփումն այլ մարդկանց հետ: Չիմա անհրաժեշտության դեպքում նրանք օգնում են ինձ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱՋԱԿԱՆ ԿԱՆԿԱՆ



Տարբեր կարողություններով կամայք կարող են փոխանակվել աշխատանքով, եթե նրանցից յուրաքանչյուրն անի այն, ինչի ունակ է:

- **Քո աշխատանքը կատարիր այլ կանանց հետ:** Այս դեպքում հավանականությունը քիչ է, որ ձեզ կվախեցնեն կամ վատ կվերաբերվեն մի վայրում, որը մարդիկ կարող են տեսնել: Եթե ձեզ վնասել են որևէ բանով վայրում, ապա մյուս կանայք կարող են լինել չափազանց վախեցած կամ ամորթիսած՝ որևէ բան անելու համար: Բայց հետագայում նրանք կարող են ձեռք օգնել:
- **Ազակցություն խնդրեք նրանցից,** հասարակական խմբերից կամ որևէ մեկից, ով բռնության է ենթարկվել:
- **Չրուցեք բուժաշխատողի հետ,** եթե ենթարկվել եք ֆիզիկական բռնության:

Բռնացող անձը փշորում է կնոջ արժանապատկությունը և ստիպում նրան և երեխաներին հավատալ, որ չեն կարողանա ապրել առանց իրեն: Հիշի՛ր, որ դու կարող ես շարունակել ապրել՝ առանց քո հանդեպ բռնություն կատարող անձի:

Ամուսինս միշտ ասում էր, որ մեծ լավություն է արել՝ ինձ հետ ամուսնանալով: Քանի որ իմ ընտանիքն աղքատ էր, նա ինձ մեղադրում էր՝ հանուն հարստության իր հետ ամուսնանալու համար: Ասում էր, որ իրենցից բացի ոչ ոք ինձ կմուրյան չէր առնի, և ինձ բռնության էր ենթարկում: Երբ ես խորհրդակցեցի իրավարանի և ամուսնու բարեկամների հետ, որոշեցի հեռանալ նրանից:



Իմ համայնքում մի կին ֆիզիկական բռնության էր ենթարկվում ամուսնու կողմից՝ հաշմանդամություն ունեցող երեխա լույս աշխարհ բերելուց հետո: Ի վերջո, որոշեց բաժանվել նրանից և վերադառնալ հայրական տուն:



Իմ ընկերուիին բռնության էր ենթարկվում՝ հաշմանդամության պատճառով: Ամուսինը չէր օգնում նրան և հանդիպում էր այլ կանանց հետ: Նա վերադարձավ հայրական տուն, որը գտավ սեր և խնամք: Նրա պայմանները բարելավվեցին, և դարձավ ավելի առողջ և ուրախ:

Աջակցել կանանց հեռանալու բռնացող ամուսիններից

Որոշ վայրերում օրենքն ու դատարանները կանանց պաշտպանում են բռնությունից: Այլ վայրերում օրինապահ մարմինները՝ ոստիկանները, իրավաբանները և դատարանները, վստահելի չեն: Բայց բոլոր համայնքներում կանայք ավելի պաշտպանված կլինեն, եթե մինյանց հետ համագործակցեն: Ահա մի քանի օրինակ՝



Եթե զուգընկերը բռնության է ենթարկել ձեզ ...

...և որոշել եք հեռանալ ճրամից ...



պատմեք այդ մասին վստահելի
մեկին (հարևան, ընկեր, բարեկամ):

Դետո զրուցեք համայնքի այլ կանանց հետ:
Հավանաբար, կգտնվեն այնպիսինները,
ովքեր ունեն նույն խնդիրները:



Դետո բոլորդ միասին կարող եք
զրուցել ձեզ վրա բռնություն գոր-
ծադրած տղամարդու հետ: Եթե նա
չխստանա, որ կվերանայի իր վե-
րաբերմունքը ձեր նկատմամբ, ապա
դիմեք համայնքի տարեցներին ...

...կամ՝ ոստիկանություն: Հավանական է,
որ ձեզ ավելի լուրջ վերաբերվեն, եթե
միասնական լինեք:

Սեռական բռնություն

Հիմնականում աղջիկներն են ենթարկվում սեռական բռնության, քանի որ մարմնով ավելի փոքր են ու քոյլ, գրեթե տեղյակ չեն սոցիալական կանոններին, սեռական կյանքի քիչ փորձ ունեն: Նրանք կարող են բռնության ենթարկվել հոր, մոր, եղբոր, քեռու, հորեղբոր, բարեկաների և այլ երեխաների կողմից: Եթե աղջիկն ինչ-որ մեկին պատմում է ընտանիքում տեղի ունեցածի մասին, ապա ընտանիքի անդամները հաճախ պաշտպանում են բռնացողին և մեղադրում են աղջկան: Երբեք մի՛ մեղադրեք բռնության ենթարկված անձին, հատկապես, եթե նա երեխա է:

Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների դեպքում բռնության ենթարկվելու հավանականությունն ավելի մեծ է, հատկապես, եթե նրանց ճնշում են իրենց հաշմանդամության պատճառով, եթե ունեն մտավոր խնդիրներ և լիարժեք կերպով ներզրավության չեն համայնքային կյանքում: Այս առիրից կարող է օգովել բռնացողը՝ մտածելով, որ ավելի քոյլ օղակ են, և համայնքները հոգ չեն տանի նրանց մասին:

Կինը կարող է սեռական բռնության ենթարկվել ամուսնու, ընտանիքի անդամների, խնամակալի կամ որևէ անծանորի կողմից: Հաճախ բռնություն է գործադրվում նաև այն մարդկանց կողմից, ում նա ճանաչում է: Որովհետև հաճախ նրա ընտանիքը քոյլ չի տալիս, որ մասնակցի համայնքային կյանքին, որտեղ նա ձեռք կրերեք ընկերներ և տեղեկություններ կստանար կնոջ և տղամարդու սեռական հարաբերությունների մասին: Եվ կնոցը կարող է թվալ, որ այլընտրանք չունի, և պետք է համակերպել բռնությանը: Նրան նույնիսկ կարող է թվալ, որ բռնացողից բացի էլ ոչ ոք իրենով չի հրապուրվի:

Կան այս բռնության տարբեր դրսնորումներ, բայց շատ հազվադեպ են մարդիկ դրանք դասում սեռական բռնությունների կամ բռնաբարության շարքին: Սեռական բռնություն, այսինքն՝ ցանկացած սեռական հարաբերություն, որը կատարվում է առանց կնոջ հանաձայնության:

Կինը կամ աղջիկը կարող են սեռական բռնության ենթարկվել երբ:

- Նրան բռնաբարում են կամ ստիպում, որ սեռական հարաբերություն ունենա որևէ մեկի հետ:
- Դիազում են նրա կրծքերին, սեռական օրգաններին կամ մարմնի այլ մասերին՝ առանց նրա հանաձայնության:
- Ստիպված է սեռական հարաբերություն ունենալ գործատուի հետ՝ աշխատանքը պահպանելու համար, կամ իր ուսուցչի հետ, որպեսզի փոխադրվի հաջորդ դասարան:
- Որպես խնամքի փոխհատուցում՝ ստիպված է սեռական հարաբերություն ունենալ:
- Գումարի, սննդի կամ խնամքի համար պարտավոր է նկարվել պոռնոգրաֆիկ թերթերում:
- Ստիպված է մասնակցել այլ մարդկանց սեռական հարաբերությանը:
- Նրան նյարդայնացնում են՝ ստիպելով, որ լի սեռական կյանքին վերաբերող կատակներ կամ պատմություններ:
- Պարտադրում են դիտել պոռնոգրաֆիա:

Սեռական բռնության կարող են ենթարկվել ցանկացած կին և աղջիկ:

Դրանում նրանք մեղավոր չեն:

Սեռական բռնության մասին գրուցեր մտավոր խնդիրներով կանանց հետ

Բոլոր երեխաներին խորապում են լսել և ենթարկվել մեծերին: Ժամանակի ընթացքում նրանք սովորում են՝ երբ սկսվոք է ենթարկվել երբ` ոչ: Սակայն մտավոր խնդիրներով կանանց սովորեցնում են միայն ենթարկվել և վարահել մարդկանց, իրենց «լավ» պահել հանգիստ և անձայն լինել անել միայն այն, ինչ իրենց ասվել է: Այս դեպքում նրանք կարող են բիրախ դառնալ այն մարդկանց համար, ովքեր կփորձնեն նրանց հանդեմ բռնություն կիրառել ներառյալ սեռական բռնություն:



Սեռական բռնության մասին գրուցեր կանանց հետ և օգներ հասկանալ որ իրենք իրավունք ունեն պաշտպանված լինելու: Համոզվեք, որ նրանք կդիմեն չեզ կամ վարահելի որևէ մեկին՝ բռնության ենթարկվելու դեպքում: Այս պարագայում նրանց կհավարան, և իրենք ել ապահով կլինեն:

Նաև համոզվեք, որ նրանք գիրեն ինչպես իմքնապաշտպանվել:

Սեռական բռնություն և բռնաբարություն

Սեռական բռնությունը ցանկացած սեռական հարաբերությունն է՝ առանց կնոջ համաձայնության: Բռնաբարությունը դրա ամենակողակի դրսնորումն է:

Սեռական բռնություն և բռնաբարություն աղջիկների հանդես

Սրանք չափազանց մեծ վնաս են հասցնում յուրաքանչյուր կնոջ և աղջկա: Հետևանքը, հատկապես աղջիկների համար, շատ ծանր է ու երկարատև: Քանի որ նրանք սեռապես դեռ լիարժեք հասունացած չեն, հաճախ չեն կարողանում ճշգրտութեն բացատրել՝ ինչ է կատարվել իրենց հետ, ուստի նրանց դժվարությամբ են հավատում: Որոշ համայնքներում բռնաբարության ենթարկված աղջիկն այլևս ամուսնության համար «պիտանի» չել:

Այն վայրերում, որը կան ռազմական զորամասեր, աղջիկներին կարող են օգտագործել որպես սպասուիիներ կամ «սեռական ստրուկներ»՝ զինվորների կամ զինված ուժերում աշխատողների համար: Հաճախ նրանք հաշմանդամ են ֆիզիկապես, իսկ արդյունքում դառնում են հաշմանդամ՝ հոգեպես:

Որոշ վայրերում մարդիկ հավատում են, որ կույս աղջկա հետ սեռական հարաբերություն ունենալու դեպքում կրուժվի ՁԻԱՀ-ը, այս պատճառով շատ երիտասարդ աղջիկներ, նույնիսկ՝ երեխաներ, ենթարկվում են բռնաբարության: Եվ քանի որ նրանք դեռևս փոքրամարմին են, նրանց սեռական օրգանները կարող են լրջորեն վընասվել, և հավանականությունը մեծ է, որ վարակվեն ՄԻԱՎ-ով կամ սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդություններով:

Ինչպե՞ս օգնություն սպանալ

Յուրաքանչյուր կնոջ պատճություն տարբերվում է մյուսից: Բայց կան որոշ գործողություններ, որոնք կարող եք անել՝ վերականգնվելու համար: Նախ և առաջ հարցը եք ինքններդ ձեզ:

- Ու՞մ օգնությունն է ձեզ անհրաժեշտ:
- Ուզո՞՞մ եք դիմել ոստիկանություն:
- Ու՞ր կարող եք դիմել՝ քժշկական օգնության ստանալու համար:
- Ուզո՞՞մ եք պատժել ձեզ բռնացողին:

Բոնության ենթարկված կինը մյուս կանանց պես օգնության կարիք ունի: Ծառ կարևոր է, որ բուժաշխատողին այցելեք վստահելի մեկի հետ, ով ձեզ կօգնի՝ որոշում կայացնելու ուստիկանություն դիմելու հարցում: Եթե երկար ժամանակ է, ինչ տիսուր, վախեցած, վլրավորված կամ զայրացած եք, ապա որևէ մեկի հետ պետք է խոսեք ձեր հոգեկան վիճակի մասին: Ընտրեք նրան, ով մտահոգվում է ձեր մասին, կայուն և վստահելի մարդ է, և համոզված եք, որ ոչ մեկին չի պատճի կատարվածի մասին: Ձեր ընտանիքի անդամներն ու մտերիմները կարող են չափազանց հուսահատված լինել, որպեսզի ձեզ ցուցաբերեն ողջ այն աջակցությունը, որի կարիքն ունեք:

Բոնաբարության ենթարկված կինը **երբեք** չպետք է մեղադրվի դրա համար: Նա քե՛ իր ընտանիքի, և քե՛ իր համայնքի աջակցության կարիքն ունի: Խարանը արգելվ է կնոջ բուժման, ինչպես նաև հետազայտմ համայնքում նման դեպքերի կանխման համար:

Բոնաբարության բողած դրոշմը

Ողջ վայրերում կարծում են, որ բոնաբարության ենթարկված կինն ամոռ և խայլառակություն է բերում իր ընկանակին կամ ամբողջ համայնքին: Նրան ոչ միայն ամիսավացիորեն մեղադրում են բոնության ենթարկվելու, այլև համայնքի բարոյական անկման համար: Սա կոչվում է խարամ՝ դրոշմ: Խարամից զերծ մնալու համար՝ կինը բոլորից կրաքցնի իր հետ կարարվածքը: Նա կվախենա, որ բըռնաբարության մասին իմանալու դիպում իրեն կևս այլ կերպ վերաբերվել: Կամ ընկանակիքը կրաքցնի այդ փասդը՝ մրածելով, որ դա կպարվազրկի իրենց: Հաշմանդամություն ունեցող կնոջ համար այն կարող է ավելի լուրջ հեղինանքներ ունենալ, քանի որ սովորաբար գումարվում է հաշմանդամության համար արդեն չեղք բերած դրոշմին:

ԱՐԱՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



Եթե դժվարություններ ունեք խոսելիս,
հնարավոր է, որ ձեզ համար դժվար լինի բացատրել՝ ինչ է պատահել, հատկապես, եթե
հուսահատ եք:

Իսկ եթե ամաջում կամ վախենում եք, դա
նույնպես կարող է դժվարացնել ձեր խոսքը:

Երբեմն ավելի հեշտ է լինում նկարների
միջոցով բացատրել կատարվածը: Բուժաշ-
խատողների և ընկերների օգնությամբ կարող
եք հեշտացնել այդ գործողությունը:

Երեխութեան

Բռնության կամ բռնաբարության ենթարկված այն կանանց համար, ովքեր խոլ են կամ ունեն մտավոր խնդիրներ, կարող է ավելի բարդանալ օգնություն ստանալը: Նոյնիսկ, եթե ի վիճակի չեն նկարագրել իրենց բռնացողին, միևնույն է, մարդիկ չեն հասկանում ժեստերի լեզուն, և նրա համար դժվար կլինի բացատրել իր հետ պատահածը:



Երբ ամուսինս իման ծեծում էր, և ոստիկանություն դիմեցի, նրանք չհասկացան իմ ժեստերի լեզուն և համբերատար չէին իմ հանդեպ: Ամուսուս մյուս կինը պաշտպանեց նրան, և իման ոչ ոք չհավատաց:

Երեխանաշում եք մեկին, ով ենթարկվել է սեռական բռնության կամ բռնաբարության

Եթե զրուցում եք նման վիճակում հայտնված կնոջ հետ, ապա հավաստիացրեք, որ կլսեք նրան: Հատկացրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է:

- Հավաստիացրեք, որ այն չի կատարվել նրա մեղավորությամբ:
- Եղեք աջակից, տեղեկացրեք նրա հոգեվիճակին, օգնեք՝ կողմնորոշվելու, թե ինչի կարիք ունի, և հոյս ներշնչեք, որ դեռ կարող է շարունակել իր կյանքը:
- Հարգեք նրա՝ գաղտնիության և անվտանգ լինելու ցանկությունները: Առանց նրա համաձայնության՝ եղածի մասին մի պատմեք երրորդ անձի:
- Միասին դիմեք բուժաշխատողի, ոստիկանություն կամ վատահելի մեկին, ով կլսի և կաջակցի նրան:
- Եթե ճանաշում եք բռնացողին, ապա երբեք մի՛ պաշտպանեք նրան: Հնարավորության դեպքում համայնքի մյուս կանանց ևս տեղեկացրեք նրա մասին: Վերջինս վտանգավոր է նաև մյուսների համար:



Ոստիկանություն դիմելու դեպքում

Գրեթե բոլոր վայրերում բռնությունը համարվում է հանցագործություն: Բայց հնարավոր է, որ երկար ժամանակ պահանջվի և դժվար լինի ապացուցել, որ ենթարկվել եք բռնության: Ոստիկանություն դիմելու ձեր որոշումը պլանավորեք մասնամասնորեն: Արդյո՞ք ձեր համայնքում այն օգնել է բռնության ենթարկված որևէ կնոջ: Եթե ուզում եք, որ այդ փաստը գաղտնի մնա, արդյո՞ք ոստիկանությունն այն գաղտնի կպահի:

Ոստիկանություն մի՛ դիմեք մենակ: Որոշ համայնքներում կինը վտանգում է իրեն և կարող է կրկին բռնաբարության ենթարկվել ոստիկանների կողմից: Գնացեք անպայման որևէ մեկի հետ:

Եթե ուզում եք ոստիկանություն դիմել, ապա արեք հնարավորինս արագ: Մի՛ լվացվեք, ցնցու մի՛ ընդունեք, մի՛ լողացեք և մի՛ փոխեք ձեր հագուստը՝ ապացուցելու համար, որ ձեզ, իրոք, բռնաբարել են: Այնուեղ հնարավոր է, որ ստիպված լինեք ամցնելու բուժքնում՝ ոստիկանության հետ աշխատող բժշկի կողմից: Դա նոյնպես կարող է օգնել՝ ապացուցելու կատարվածքը:



Եթե ձեզ բռնացողն արդեն ճերակաված է, ապա ստիպված կլինեք նրան ճամաչել ոստիկանների ներկայությամբ կամ դատարանում: Բռնաբարության ենթարկված կնոջ համար դժվար կլինի դիմել ոստիկանություն: Կատարվածի մասին պատմելիս կարող եք ամեն ինչ նորից վերասպել: Որոշ մարդիկ ձեզ կմեղադրեն, մյուսները կպնդեն, որ սոում եք:

Շատերը չեն ել լսի՝ ձեր հաշմանդամության պատճառով: Նրանք կասեն, որ հաշմանդամություն ունեցող կինը չի կարող լինել համոզիչ կամ ճշտախոս վկա: Բայց նրանցից ոմանք հաջողություն ունեցել են դատարաններում, հատկապես, եթե համայնքներն աջակցել են վերջիններին: Եթե որոշել եք դիմել դատարան, ապա գնացեք վստահելի մեկի հետ:

Բռնաբարության հետևանքով առաջացած առողջական խնդիրներ

Այս դեպքում անպայման դիմեք բուժաշխատողի, թեկուզև լրջորեն վնասված չեք: Ներկայացրեք կատարվածը, նա կարող է կանխել բռնաբարության հետևանքով առաջացող առողջական խնդիրները:

Հղուություն

Հնարավոր է կանխել այն, եթե գործեք արագ և օգտագործեք հակաբեղմնավորիչներ: Այդ մասին գրուցեք բուժաշխատողի հետ: Օգտագործեք դրանք հնարավորինս արագ կերպով, բայց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում (72 ժամ):

Նույնիսկ, եթե օգտագործելու դեպքում հաջորդ ամիս ունենում եք պարերաշրջանի խանգարում, ապա դիմեք բուժաշխատողի՝ կանխելու հնարավոր հիփությունը: Որոշ երկրներում ընդհատումը համարվում է օրինական, եթե կինը ենթարկվել է բռնաբարության:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ և ՄԻԱՎ/ՁԻԱՀ

Չեզ բռնացող անձը կարող է ունենալ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ, որով կարող եք և վարակվել դուք: Բուժաշխատողը ձեզ կտա դեռքրայք՝ կանխելու դրանք՝ սիֆիլիս, գոնոռեա և քլամիդիոզ, նույնիսկ, եթե չեք կասկածում, որ վարակվել եք: Նախընտրելի է կանխել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, քան սպասել դրանց առաջացման նախանշաններին:

Դուք նաև պետք է անցնեք ՄԻԱՎ-ի թեսաւ՝ 2-4 շաբաթվա ընթացքում: Մինչև վարակակիր չինելու փաստի հաստատվելը՝ խորհուրդ է տրվում օգտագործել պահպանակներ՝ ձեր գուգրներոցը հնարավոր վարակումից զերծ պահելու համար: Եթե ապրում եք մի վայրում, որը շատ են ՄԻԱՎ-ի վարակակիրները, ապա դիմեք բուժաշխատողի՝ օգտագործելու դեղորայք, որը կնվազեցնի վարակվելու վտանգը:

Պարովածքներ և կյրկածքներ

Բռնաբարության ենթարկված կինը սեռական օրգաններում կարող է ունենալ պատովածքներ և կտրվածքներ: Սա կարող է ցավ պատճառել, բայց ժամանակի ընթացքում կանցնի: Արյունահոսության դեպքում դիմեք բժշկի, եթե անհրաժեշտ է, նա կկարի պատովածքները և դեղորայք կտրամադրի՝ վարակի փոխանցումը կանխելու համար:

- Թրջեք ձեր սեռական օրգանները եռացրած-հովացրած ջրով՝ օրական 3 անգամ: Կարող եք երիցուկի ծաղիկներ լցնել ջրի մեջ, այն կնպաստի վերքերի բուժմանը: Կարող եք նաև հալվեի (ալոե) տերևների հեղուկով թրջոցներ դնել վերքերի վրա:
- Միզելուց հետո ամեն անգամ սրբեք ձեր սեռական օրգանները թաց կտրով՝ այրոցից խուսափելու համար: Շատ հեղուկ խմելը նույնայեն կարող է օգտակար լինել:
- Ուշադիր հետևեք բորբոքումների նախանշաններին՝ թարախի առկայություն, տհաճ հոտ և սաստկացող ցավ:



Միզապարկի և երիկամների բորբոքումներ

Սրանք հաճախ առաջանում են կուպիտ բռնաբարությունից հետո: Եթե միզելիս ունենում եք այրոց կամ արյուն, դիմեք բուժաշխատողի, հնարավոր է, որ դեղորայքի անհրաժեշտություն լինի: Շատ հեղուկի օգտագործումը նույնայեն կարող է օգնել՝ 8 քաժակ և ավելի:

Բուժաշխատողի մուր

Եթե տեսնում եք սեռական բռնության կամ բռնաբարության ենթարկված մեկին, կարելից և բարի եղեք նրա նկատմամբ: Խրախուսեք, որ ձեզ պատմի պատահածի մասին, լսեք ուշադիր, տպավորություն ստեղծեք, որ հավատում եք, և մի մեղադրեք նրան: Նրա համար դժվար կլինի, եթե փորձեք ձեռք տալ կամ զննել: Նախքան նրան դիպչել՝ բացատրեք, թե ինչ եք անելու, և սպասեք, մինչև պատրաստ լինի: Հիշեք, որ նրա հոգեկան խնդիրները կարող են շարունակվել երկար ժամանակ, նույնիսկ՝ տարիներ:



Միասին քննարկեք նրա հոգեկան վիճակը: Տրամադրեք դեղորայք՝ հղիությունը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները կանխելու և ՍԻԱՎ/ԶԻԱՀ-ով վարակվելու վտանգը նվազեցնելու համար: Եթե նա հոյացել է, ապա օգնեք, որ որոշում կայացնի:

Գրի առեք, թե ով է բռնացել նրան, և ինչ է կատարվել: Եթե ձեր հիմնարկությունում գրառումներ չեն կատարում, ձերք պահեք ապահով վայրում: Նրան նկարեք դիմացից և հետևի կողմից և նշեք մարմնի վնասված մասերը: Ցույց տվեք ձեր գրառումը և բացատրեք, որ ոստիկանություն դիմելու կամ բռնացողից բարոյական վնասի հատուցում պահանջելու դեպքում այն կօգնի ապացուցել, որ նա բռնության է ենթարկվել:

Քննարկեք նրա հոգեկան և հոգական վիճակը, հարցեք՝ արդյոք կա՞ մեկը,

ԴԱՅԱՐՄԱՆ ԱՌԵՎԱՐԱՐ ՀԵ ԴԱՅԱՐՄԱՆ ՊԱՏՐԱՌԵՐԸ

որը կսի նրան: Օգնեք, որ նորից հարգի իրեն և վստահություն ձեռք բերի իր կյանքի նկատմամբ: Եթե ուզում է դիմել ոստիկանություն, օգնեք՝ օգտվելու իրավաբանական ծառայությունից և դիմելու բռնության ենթարկված կանանց աջակից կազմակերպություններին:

Օգնեք, որ նա պատահածի մասին պատմի գուգընկերոջը կամ ընտանիքին: Կարող եք ուղիներ ցույց տալ ընտանիքի անդամներին՝ նրան աջակցելու համար: Հիշեք, որ նրանց նույնական աջակցություն է անհրաժեշտ՝ ստեղծված իրավիճակը հաղթահարելու համար:



Եթե բուժաշխատող եք, ապա զննությունից առաջ միշտ թույլտվություն հարցրեք հաշմանդամություն ունեցող կնոջից կամ աղջկանից: Սա կօգնի, որ նա վստահություն ձեռք բերի ձեր նկատմամբ:

Մեռական հարաբերություններ բռնարարությունից հետո

Կարող եք բնականոն սեռական կյանքով ապրել, բայց պեսոք է սպասեք, մինչև ձեր սեռական օրգաններում պատռվածքներն ու վերքերը լավանան: Բռնարարությունից հետո ունեցած սեռական հարաբերությունները որոշ կանանց հիշեցնում են դրա մասին: Եթե ունեք նման զգացողություն, ապա գրուցեք ձեր գուգընկերոջ հետ, բացատրեք, թե ինչո՞ւ են ձեր սեռական կյանքում փոփոխություններ կատարվել, ինչո՞ւ է դա ձեզ վախեցնում, և ինչո՞ւ ժամանակի կարիք ունեք՝ դրանք հաղթահարելու համար: Խնդրեք նրան, որ աջակցի ձեզ՝ հաղթահարելու այդ վախը նորք գրկախառնումների միջոցով, առանց ձեր սեռական օրգաններին դիմումի: Այն պահից, երբ ձեզ ավելի ապահով կզգաք, կարող եք նորից ապրել սեռական կյանքով: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է, որ երկուստեք համբերատար լինեք:

Բռնարարության ենթարկված կնոջ համար մեծ նշանակություն ունի գուգընկերոջ կարեկից և հոգատար վերաբերմունքը: Բայց շատ հաճախ ամուսինը, իմանալով բռնարարության մասին, մերժում է կնոջը՝ ամոք և գայրույթ զգալով պատահածի համար, մանավանդ, եթե համարում է, որ այն պատվազրկում է իր ընտանիքը: Համայնքից որևէ մեկի հետ գրույցը կարող է մեղմել նրա վերաբերմունքը:

Ձեր հոգեկան վիճակը բռնարարությունից հետո

Ձեր մարմնի վերքերի բուժվելուց հետո կարող եք մտածել պատահածի մասին: Հաճախ մտածում եք.



Չատ կարևոր է, որ բռնության ենթարկված կինը գրուցի որևէ մեկի հետ կամ զբաղվի այնպիսի բանով, որը նրան թույլ կտա ավելի լավ զգալ:

Յուրաքանչյուր կին գտնում է բուժման իր ձևը: Որոշ կանայք ծես են իրականացնում, մյուսները փորձում են պատժել բռնարարին կամ քայլեր են ձեռնարկում մյուս կանանց բռնությունից զերծ պահելու ուղղությամբ: Այս ամենը համբերատարություն է պահանջում թե՝ ձեզանից, և թե՝ ձեր շրջապատից, մանրամասները՝ 3-րդ գլխում:

Բռնությունը հաստատություններում

Երբեմն, եթե ընտանիքը դժվարանում է խնամել հաշմանդամություն ունեցող կնոջը, որոշում է նրան տեղավորել որևէ մասնագիտացված հաստատությունում կամ խնամքի տանը: Նրանք մտածում են, որ այնտեղ ավելի լավ կիսնամեն իրենց աղջրկան կամ մորը: Այդ հաստատություններում ապրող շատ մարդիկ իրենց համարում են կախյալ, թեև հաշմանդամություն ունեցող որոշ անձիք իրենց վիճակը բարելավել են խնամքի տներում, հիվանդանոցներում կամ մանկատներում ստացած օգնության շնորհիվ: Մարդիկ հաճախ մեկուսացված, լրված և անկարող են զգում իրենց և ավելի խոցելի՝ բռնության նկատմամբ: Հաճախ իրենց ընտանիքից հեռու են ապրում, կամ ընդհանրապես չկա նրանց մասին հոգացող մեկը:

Խնամքի տներում ապրող կանայք հաճախ ի զորու չեն կառավարել իրենց սեփական կյանքը և չեն կարող ինքնուրույն որոշումներ կայացնել: Մտավոր խնդիրներով կանանց հաճախ ընդհանրապես մեկուսացնում են:

Մյուս խնդիրները, որ կարող են առաջանալ խնամքի տներում, կապված են տվյալ հաստատության կառավարման ձևի հետ: Դրանցից շատերը կառավարվում են թիշ բյուջեով, սակայն շատ բնակիչներ ունեն: Հաճախ հաստատությունների աշխատողները գերծանրաբեռնված են, ուժասպառ և հուսահատ: Երբեմն ստիպված են միաժամանակ և խնամել շահառուներին, և՝ կարգ ու կանոն ապահովել:



Այս ամենից բացի՝ խնամքի տների բնակիչները կարող են այլ բռնությունների ենթարկվել:

- Ստիպողաբար սեռական հարաբերություն են ունենում աշխատողների և բնակիչների հետ:
- Նրանց ծեծում, ապտակում և վնասում են:
- Չեն բույլատրում, որ զբաղվեն որևէ աշխատանքով կամ այլ գործունեությամբ:
- Հարկադրաբար ամլացման կամ աբորտի են ենթարկում:
- Փակում են սենյակում:
- Որպես պատիճ՝ ստիպում են սառը ցնցուղ ընդունել:
- Հարկադրաբար գործածում են հանգստացնող դեղամիջոցներ:
- Ստիպված են մերկանալ մյուսների ներկայությամբ:
- Ականատես են դարձնում այլ մարդկանց հանդեպ կիրառվող բռնությամբ:
- Չսպաշափիկ են հազցնում:

Հասպատություններում աշխատող մարդիկ

Նրանցից շատերը խնամք և հոգաբարություն են ցուցաբերում հաշմանդաւորյուն ունեցող կանանց, բայց կամ նաև աշխատողներ, ովքեր վայր են վերաբերվում իրենց շահառուներին: Նրանցից շատերին հնարավոր է՝ դուր չգտնելու մասին ականանելի եղած վերաբերմունքը, և փորձեն որոշ հարցերում փոփոխություններ կարգարել: Այս խնամակալները հիմնականում երկար են աշխատում, բայց ունեն ցածր աշխատավարձ:

Հաճախ նրանք ոչինչ չեն անում, քանի որ չգիտեն՝ ինչ է պետք անել, կամ վախենում են աշխատանքը կորցնելուց: Եթե խոսում են բռնության մասին, նրանց վախեցնում են, կոպղում կամ էլ ծաղրի ենթարկում: Որոշ դեպքերում խնամակալները ևս մկրածում են, որ մասնագիրացված հասպատություններում նման վերաբերմունքը բնական երևույթ է:

Խնամքի դառնարկում պատճենահանարկուները, հնարավոր է, որ խնամքի գրեյյալ չինին կարարվող բռնության մասին կամ այն բնական համարեն:

Հաշմանդաւորյուն ունեցող կանանց հանդիպ բռնությունը կամ վայր վերաբերմունքը ողջ համայնքի խնդիրն է: Խնամքի դառնարկուները պետք է լինին ուշադրության կենտրոնում և բռնության չենթարկվեն:

Փորձենք փոփոխություններ կարգարել հասպատություններում

Եթե ճանաչում եք մեկին, ով ապրում է խնամքի տանը, կատարեք հետևյալը.

- Ստեղծեք ծնողական կամ ընտանեկան խումը և գրուեք հիմնարկության պատասխանատու անձանց հետ: Եթե խմբով ներկայանաք, հնարավոր է, որ ձեզ ավելի մեծ ուշադրությամբ լսեն:
- Կապ հաստատեք համայնքի և մասնագիրացված հաստատության հետ, որը հնարավորություն կտա այնտեղ գտնվող անձին՝ զբաղվելու աշխատանքային գործունեությամբ:
- Տեղեկացեք այցելության ժամերին և պայմաններին, որոնք բույլ կտան հաստատության բնակիչն առանձնազրույցներ ունենալ այցելուների հետ:
- Ծանոթացեք համայնքային այն ծրագրերին, որոնց շնորհիվ հաշմանդաւորյուն ունեցող կինը կարող է խնամք ստանալ տանը:

Ի՞նչ կարող ենք անել՝ բռնությունը կանխելու համար


Ինքնապաշտպանություն

Հաշմանդամություն ունենալ՝ չի նշանակում, որ քոյլ եք և ողջ կյանքում կախյալ վիճակում եք մյուսներից: Կարող եք սովորել՝ ինչպես ինքնապաշտպանվել, զերծ մնալ շահագործումից և սեռական բռնությունից:

Դուք մենակ չեք: Դուք կանաց և տղանարդկանց՝ «Վերջ տանք կանաց հանդեպ բռնությանը» համաշխարհային շարժման մի մասնիկն եք:

Կարող եք հրաժարվել մարդկանց առաջարկած այն օգնությունից, որի կարիքն այլևս չունեք: Սա այն միջոցներից մեկն է, որը նրանց ցույց կտա ձեր ուժն ու ինքնուրույն խոսելու և գրությունը: Հնարավոր է, որ ձեզ օգնություն առաջարկող անձը միայն լավ մտադրություններ ունի, բայց մի վարանեք նրան ասել՝ «ոչ», նույնիսկ, եթե դա նրան դուք չի գալիս: Եթե մոտակայքում կան այլ մարդիկ, ապա խոսեք բարձրածայն, որպեսզի նրանք էլ ձեզ լսեն: Փորձեք լինել հաստատակամ, բայց՝ ոչ կոպիտ նրանց հանդեպ, ովքեր ձեզ առաջարկում են անկեղծ, բայց ոչ անհրաժեշտ օգնություն:

Երբեմն մարդկանց թվում է, թե կարող են ազատ դիպչել ձեզ, հնարավոր է՝ փորձեն օգտվել այդ առիթից: Եթե անցանկալի որևէ մեկն է, ապա ասեք նրան հետևյալը.



1. Դու ինչ ձեռք ես դալիս:

2. Դու ինչ դուք չի գալիս:

3. Չիորեկի ինձանից հեռու դար:

Եթե որևէ մեկը բռնում է ձեր ձեռքը կամ հրում անվասայլակը, բարձրածայն և հաստատակամ ասեք.

4. Դու բռնել ես իմ ձեռքը:

5. Թո՞ղ ձեռքս:



Եթե որևէ մեկը մոտենում է ձեզ, և կարծում եք, որ կարող է վնասել, ասեք.



Հաճախ այսքանը բավարար է, որ տվյալ անձը հեռանա: Նա այն տպավորությունը կտանա, որ ձեզ վնասելի այնքան էլ հեշտ չէ: Իսկ եթե շարունակում է մոտենալ, ապա օգնություն կանչեք:



Բռնություն գործադրողը հաճախ ընտրում է այնպիսի մարդկանց, ում հեշտ կլինի վնասել: Կինը, անկախ հաշմանդամության տեսակից, կարող է ավելի թույլ և անպաշտպան երևալ, հատկապես, եթե մոլորվել է կամ չփիտի, թե որտեղ է գտնվում: Այսպիսով, ինքնավստահությունն այնքան կարևոր է, որքան ֆիզիկապես պաշտպանված լինելը: Հաստատակամությունը կանանց ամենալավ պաշտպանությունն է: Կինը խոսում, շարժվում և գործում է իր իրավունքի գիտակցումով: Նա իրեն ուժեղ և վստահ է զգում:

Ի՞նչ անել հարժակման դեպքում

Եթե կինը դիմադրում է մեկին, ով փորձում է իրեն վնասել, նա կարող է խուսափել բռնությունից: Որոշ մարդիկ կարծում են, որ դիմադրությունը կարող է ավելի զայրացնել բռնացողին, սակայն նա արդեն իսկ վտանգավոր է: Բռնությանը դիմադրելով՝ դուք հնարավորություն կստանաք գերծ մնալ դրանից, քանի որ այնպիսի տպավորություն կստեղծվի, որ ձեզ վնասելն այնքան էլ հեշտ չէ:


Անհնար է կանխագուշակել ձեր արձագանքը, եթե մեկը փորձում է վնասել: Որոշ կանայք լցվում են զայրույթով և այնպիսի ուժով են դիմադրում, որի նասին անգամ չին էլ կարող մտածել: Մյուսները վախից անշարժանում են: Հիշեք, եթե դուք ենթարկվել եք բռնաբարության, դրա պատճառը բռնորովին էլ ձեր անկարողությունը չէ: Դուք այդ հարցում մեղավոր չեք:

Եթե որևէ մեկը հարձակվում է կամ փորձում ձեզ բռնաբարել, ապա արեք հնարավորինս ամեն ինչ՝ տվյալ վայրից հեռանալու համար:

- Արեք մի քան, որից զզվանք կառաջանա՝ անիմաստ խոսքեր ասեք, քըեք:
- Վնասեք նրա մարմնի նորքը մասերը՝ աչքերը, քիթը, ամործիները՝ ճանկուելու, հարվածելու կամ ոտքով խփելու միջոցով:
- Ձեր անվասայլակը հնարավորինս ուժեղ հրեթ դեպի տվյալ անձը:

Աղմուկ ստեղծեք, զոռացեք, ճացեք, ամբողջ ուժով բարձր օգնություն կանչեք:

Ո՞չ



Կծու պղպեղ կամ հող նետեր նրա աչքերին: Դա միաժամանակ նրան կլուրացնի և շատ ցավոտ կլինի, իսկ դուք փախչելու հնարավորություն կունենար:



Եթե հեշտությամբ եք կորցնում ձեր
հավասարակշռությունը, ապա
ամենալավ տարրերակը նախ գետնին
նստելն է, հետո՝ ինքնապաշտպանվելը:



Եթր հարձակվող անձը ծալում է ծընկ-
ները, խփեք նրա աչքերին և քրիմ: Դուք
կարող եք նաև զլյուզ հարվածել նրան:



Այն կանանց համար, ովքեր հենակների օգնությամբ են
տեղաշարժվում, թոյլ են կամ ամուր չեն կամքնում
ուղերի վրա, ամենահարմարը նստած կամ ծնկները
ծալած դիրքն է: Եթր արդեն նստած եք հատակին,
հարվածեք նրան հենակներով կամ ձեռնափայտով:

Եթե կորցնում եք ձեռնափայտը, հնարավոր է, որ դա ձեզ շփոքեցնի: Եթր զգում
եք, որ կարող են հարձակվել, պահեք ձեր ձեռնափայտի կարճ և հաստ մասը դեպի
տվյալ անձը: Մի՛ շարժեք այն, քանի որ այդ դեպքում հեշտ կլինի ձեր ձեռքից խլել:

Ավելի հեշտ է հարվածել ձեռնափայտի
կարճ և հաստ մասով:


Եթե քայլում եք հենակների օգնությամբ,
օգտագործեք այն՝ որպես ինքնապաշտ-
պանության միջոց:



Երեկոյիր եր

Կույր կանայք հեշտությամբ են տարածության մեջ կորցնում իրենց կողմնորոշումը, երբ նրանց վրա հարձակվում են: Այդ դեպքում փորձեք գտնել հարձակվողի պարանոցի և ուսերի միացման հատվածը: Դա ամենահեշտ գտնվող մասերից մեկն է, որը կտեղիկացնի նրա մարմնի դիրքի մասին: Այնուհետև կարող եք հարվածել նույր հատվածներին:

Խնդրիր ընկերներիդ, որպեսզի քեզ հետ փորձեն ավելի հեշտ և արագ գտնել տվյալ հատվածները:



*Բարձրացրեք ծեր ծունկը և հնարավորինս
ուժեղ հարվածեք նրա ամորձիներին:*

Սովորեք ինքնապաշտպանվել

Իմանալով ինչպես ինքնապաշտպանվել՝ ձեզ ավելի ինքնավստահ և ապահով կգգաք, նույնիսկ, եթե երբեք բռնության չեք ենթարկվել: Սովորեք լինել ուժեղ և վստահ: Մտածեք ինքնապաշտպանության տարրեր ձևերի մասին և փորձեք այլ կանանց հետ: Կարող եք խումբ ստեղծել և փորձել միասին: Ինքնապաշտպանություն ուսուցանող որոշ խմբերում կանանց սովորեցնում են ուժեղ հարվածել: Նրանք փորձերն անում են մանեկենների կամ բարձերի վրա: Սա շատ օգտակար է այն կանանց համար, ովքեր ֆիզիկապես թույլ են:

ԱՊՈՎԵԼՈՒ ԻՐԱԿԱԿՈՒՅԹԸ

Ընդունիքը և խնամակալները կարող են կանխել բռնությունը

Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներն արդեն սովորել են, որ իրենց պետք է դիմացն և զննեն, որ տեղաշարժվելու են ընտանիքի անդամների, օգնականների և բուժաշխատողների օգնությամբ: Հաճախ այդ անելու համար ոչ ոք թույլտվություն չի հարցնում: Ցանկացած կին իրավունք ունի ընտրելու, թե իրեն ով պետք է հայի:

Ընտանիքի անդամները և խնամակալները կարող են օգնել կանխելու սեռական բռնությունը՝ սովորեցնելով կնոջը տարրերել «հաճելի շփումը» «տիհածից»: Դիմացելուց առաջ միշտ թույլտվություն հարցըք: Եթե նա որևէ մեկի օգնության և աջակցության կարիքն ունի առօրյա հարցերում, ապա միշտ թույլ տվեք՝ ինքնուրույն որոշի, թե ինչի կարիք ունի: Թող ինքը որոշի, թե ինչ դիրքով է ավելի հարմար: Օգնեք հաշմանդամություն ունեցող կնոջը՝ ասելու «ոչ» այն դեպքում, երբ որևէ բան իրեն դուր չի գալիս:

Կնոջ մարմինն
արժանի է
հարգանքի:



Զրուցեք սեռական բռնության և բռնաբարության թեմայով և համոզվեք, որ նա գիտի ինչպես ինքնապաշտպանվել:

Եթե հաշմանդամություն ունեցող երեխան մեծանում է հարգանքի մքնողրտում, նա կդառնա վստահ և հաստատակամ մարդ, և քիչ հավանական է, որ նրան վատ վերաբերվեն:

Համայնքները կարող են կանխել կանանց ակադիմամբ բռնությունն ու շահագործումը

Եթե քննադատվում է բռնությունը, և հաշմանդամություն ունեցող կանայք համայնքի լիիրավ անդամներ են, քիչ հավանական է, որ այնտեղ որևէ մեկը ենթարկվի բռնության: Բայց, եթե հենց համայնքն է նրանց խտրականության ենթարկում, ապա մեծանում է բռնության ենթարկվելու վտանգը:

Օգնություն առաջարկեք բռնության ենթարկված կանանց, հատկապես՝ հաշմանդամություն ունեցողներին: Նրանց աջակցության կենտրոնները, արագ արձագանքող խնամքի տները, ապաստարանները և բռնության դեմ պայքարող այլ հաստատություններ կարող են ներառել հատուկ ծրագրեր՝ կանանց օգնելու համար:

Առողջապահական կենտրոնները, դպրոցները, խորհրդատու կազմակերպությունները, եկեղեցիները և համայնքի տարեցները կարող են աջակցել բռնության ենթարկված անձանց՝ հոգեկան առողջության խնդիրների լուծման հարցում: Խորհրդատվությունը կարող է օգնել նրանց՝ վերականգնելու վստահությունը, ինքնահարգանքը և բարեկեցությունը:

Տղամարդկանց մասնակից դարձրեք քննարկումներին և բացատրեք, թե ինչ է բռնությունը: Համոզվեք, որ ոստիկանությունը և համայնքի պաշտոնատար անձիք գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ բռնությունը հանցանք է: Համայնքի բոլոր ծառայություններում՝ ոստիկանությունում, հիվանդանոցներում և այլուր, պետք է ներգրավված լինեն ժեստերի լեզվին տիրապետող անձիք:

Տեղեկացեք ձեր երկրում նրանց պաշտպանող օրենքին և այն ներկայացրեք մյուսներին: Կազմակերպեք կանանց ժողովներ, որտեղ ներառված կլինին նաև հաշմանդամություն ունեցող կանայք, և քննարկեք՝ ինչպես դիմակայել նրանց

Կանայք նույնպես պետք է ներգրավված լինեն ոստիկանական աշխատանքում և անցնեն հատուկ պատրաստվածություն՝ բռնության ենթարկված կանանց աջակցելու համար:



նկատմամբ կիրառվող բռնությանն ու շահագործմանը: Եթե կանայք, բուժաշխատողները և համայնքի մյուս անդամները հաղորդակցվում են իրենց գաղափարներով, այն բարձրացնում է նրանց պաշտպանվածությունը:



Եթե կիմմա ասում է, որ բռնության է ենթարկվել, նրան պետք է հավատալ և աջակցել՝ անկախ նրանից, թե ով է: Խսկ եթե հաշմանդամություն ունեցող կիմմա է ենթարկվել բռնության, ապա դա ավելի վատ է, քանի որ նա արդեն բույլ է:



**Քոնությունը միայն ընտանիքի խնդիրը չէ: Այն սոցիալական և
համայնքային առողջությանը վերաբերող հիմնահարց է:**